ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ

«16» 07 2026 թ. N ԱԱ/26-Լ

ՀՐԱՄԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի N 38-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 207.1-ին հոդվածով, 218-րդ հոդվածի 2-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սոցիալական ապահովության ծառայության պետի 2012 թվականի ապրիլի 11-ի «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնները հաստատելու և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության պետի 2008 թվականի դեկտեմբերի 10-ի N 175 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 38-Լ հրամանի (այսուհետ նաև՝ Հրաման) հավելվածը լրացնել նոր՝ 13-րդ գլխով, հետևյալ բովանդակությամբ.

««XIII. ԾՆՈՂԱԿԱՆ ԺԱՄԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ»

156. Ծնողական ժամը ինքնուրույն և առանձին երաշխիք է և կարող է օգտագործվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի և (կամ) սույն կանոններով սահմանված այլ երաշխիքների հետ միասին:

157. Ծնողական ժամը ներառվում է աշխատողի աշխատաժամանակի մեջ:

158. Ծնողական ժամը ներառվում է աշխատաժամանակում, և այդ ժամանակահատվածում պահպանվում է աշխատողի հիմնական աշխատավարձը

(գործավարձով վարձատրվող աշխատողների դեպքում՝ միջին աշխատավարձ, բացառությամբ պարգևատրման գումարների):

159. Ծնողական ժամից օգտվելու իրավունք ունի Ծառայության աշխատող ծնողը (այդ թվում՝ խնամատար ծնողը, որդեգրողը կամ խնամակալը), ով՝

1) ունի մինչև տասներկու տարեկան մեկ կամ երկու երեխա,

2) ունի մինչև տասներկու տարեկան երեք և ավելի երեխա,

3) ունի մինչև տասնութ տարեկան՝ ֆունկցիոնալության ծանր կամ խորը սահմանափակում ունեցող երեխա (անկախ երեխաների ընդհանուր թվից):

160. Ծնողական ժամից կարող են օգտվել Ծառայության աշխատող երկու ծնողը (այդ թվում՝ խնամատար ծնողը, որդեգրողը կամ խնամակալը) հավասարապես:

161. Ծնողական ժամը տրամադրվում է՝

1) մինչև տասներկու տարեկան մինչև երկու երեխա ունեցող ծնողին (խնամատար ծնողին կամ որդեգրողին կամ խնամակալին)՝ իր ցանկությամբ՝ օրական առավելագույնը 30 րոպե,

2) մինչև տասներկու տարեկան երեք և ավելի երեխա ունեցող ծնողին (խնամատար ծնողին կամ որդեգրողին կամ խնամակալին)՝ իր ցանկությամբ՝ օրական առավելագույնը մեկ ժամ,

3) մինչև 18 տարեկան՝ ֆունկցիոնալության ծանր կամ խորը սահմանափակումով երեխա ունեցող ծնողին (խնամատար ծնողին կամ որդեգրողին կամ խնամակալին)՝ իր ցանկությամբ՝ օրական առավելագույնը մեկ ժամ (անկախ երեխաների թվից):

162. Ծնողական ժամից օգտվելու համար աշխատողը Ծառայության Գլխավոր քարտուղարին է ներկայացնում գրավոր դիմում (Ձև N 5.1), որին կցվում է երեխայի ծննդյան վկայականը (վկայականները), իսկ խնամակալության, ինչպես նաև ֆունկցիոնալության սահմանափակում ունեցող երեխայի դեպքում՝ համապատասխան փաստաթղթերը ուղարկվում են Ծառայության մարդկային ռեսուրսների կառավարման վարչության hr@socservice.am էլեկտրոնային փոստի հասցեին:

163. Դիմումը բավարարվում է, հիմք ընդունելով սույն գլխի 161-րդ կետում սահմանված առավելագույն տևողությունը, եթե աշխատողը միաժամանակ բավարարում է մեկից ավելի ենթակետերի պահանջներին:

164. Դիմումը կարող է մերժվել միայն այն դեպքում, երբ Ծառայության աշխատող ծնողը (խնամատար ծնողը, որդեգրողը կամ խնամակալը) չունի ծնողական ժամից օգտվելու իրավունք:

165. Ծնողական ժամի իրավունքը կարող է դադարեցվել, եթե ի հայտ են եկել ծնողական ժամից օգտվելը բացառող հանգամանքներ:

166. Ծնողական ժամի իրավունքի դադարեցման հիմքեր առաջանալու դեպքում՝ աշխատողը պարտավոր է եռօրյա ժամկետում գրավոր տեղեկացնել Ծառայության գլխավոր քարտուղարին:

167. Ծնողական ժամի իրավունք ունեցող Ծառայության աշխատողն իր բացակայության տևողությունը և բացակայության ժամերը նախապես համաձայնեցնում է անմիջական ղեկավարի, իսկ մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի դեպքում՝ Ծառայության պետի ոլորտային տեղակալի հետ:

168. Ծնողական ժամը կարող է օգտագործվել ամբողջությամբ՝ առավելագույն տևողությամբ կամ մասնատված՝ աշխատանքային օրվա ընթացքում:»:

2. Հաստատել ծնողական ժամից օգտվելու համար դիմումի ձևը (Ձև N 5.1)՝ համաձայն սույն հրամանի հավելվածի:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

4. Միասնական սոցիալական ծառայության քարտուղարության պետին՝ ապահովել սույն հրամանի հրապարակումը:

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

«Հավելված»
Միասնական սոցիալական ծառայության պետի
2026 թվականի հուլիսի 16 -ի N 214/26-Լ հրամանով
հաստատված Ձև N 5.1

ԴԻՄՈՒՄ ԾՆՈՂԱԿԱՆ ԺԱՄԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Միասնական սոցիալական ծառայության գլխավոր քարտուղարին

_____

Աշխատող _____ -ից

(պաշտոն, անուն, ազգանուն)

Խնդրում եմ ինձ տրամադրել ծնողական ժամից օգտվելու հնարավորություն:

Տեղեկացված եմ, որ աշխատանքային օրվա ընթացքում բացակայության տևողության և ժամանակահատվածի (օրվա սկիզբ, ավարտ կամ միջանկյալ) մասին՝ ելնելով երեխայի կարիքներից, պարտավոր եմ նախապես տեղեկացնել անմիջական ղեկավարիս:

Կցվող փաստաթղթեր՝

1. երեխայի ծննդյան վկայականը (վկայականները),
2. ☐ խնամակալության վերաբերյալ փաստաթուղթը կամ ֆունկցիոնալության սահմանափակման վերաբերյալ փաստաթուղթը ուղարկվել է Ծառայության մարդկային ռեսուրսների կառավարման վարչության էլեկտրոնային փոստի հասցեին:

Ստորագրություն՝ _____ **Անուն Ազգանուն՝** _____

Ամսաթիվ՝ _____թ.